ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 06.02.2019թ. հ.01/47Մ գրության՝ տեղեկացվում է.

«Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարվել է Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N53-Ա որոշմամբ: Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N193-Ն որոշմամբ վերոնշյալ ընկերությունը հանձնվել է Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի ենթակայությանը, որին պատվիրակվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված լուծարային հանձնաժողովի նշանակման, լուծարային հաշվեկշռի հաստատման լիազորությունները: «Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները: «Արաբկիր-սերվիս» փակ բաժնետիրական ընկերության նախկին աշխատակիցները կարող են մասնակցել Երևանի քաղաքապետարանի կողմից առաջիկայում անցկացվող թափուր աշխատատեղերի համար նախատեսված մրցույթին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ